



ԸՆԹԱՑԻԿ ԵՎԿԱՄ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԻ/ՀԱՇԻՎՆԵՐԻ/ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

Ք. _____ " _____ 20__ թ.

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 13.09.1996թ. թիվ 5 որոշմամբ, գրանցման համար 57, վկայական թիվ 0164, հասցե՝ ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան փողոց 26/1), այսուհետ՝ «Բանկ», ի դեմս _____ որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____ այսուհետ՝ «Հաճախորդ», ի դեմս _____ որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Բանկը պարտավորվում է Հաճախորդի անունով բացել թիվ _____ /հաշվահամար/ _____ /նշել արժույթը/ բանկային հաշիվ/ներ/ը

/հետագայում՝ Հաշիվ կամ Հաշիվներ/, այդ հաշվին մուտքագրել Հաճախորդի անունով ստացվող դրամական միջոցները, սահմանված կարգով հաշվից կատարել փոխանցումներ և կանխիկ ձևով տրամադրել համապատասխան գումարներ, ինչպես նաև Հաճախորդի կարգադրությամբ /հանձնարարագրով, հայտով/ կատարել այլ գործառնություններ, որոնք նախատեսված են Բանկի ներքին ակտերով և/կամ գործարար շրջանառության սովորույթներով:

1.2. Հաշիվը բացելիս Հաճախորդի կողմից Հաշվին մուտքագրվում է Բանկի սակագներով /այսուհետ՝ Սակագին/ սահմանված չնվազող մնացորդ, որը Բանկի կողմից դեպոզիտացվում է Հաշվին:

1.3. Հաշվին առկա դրամական միջոցների մնացորդի նկատմամբ Բանկի կողմից հաշվարկվում է Սակագներով սահմանված տարեկան տոկոսադրույք /այսուհետ՝ Տոկոսադրույք/, որի հիման վրա հաշվարկված գումարները մուտքագրվում են Հաշվին՝ եռամսյակը մեկ անգամ:

1.4. Հաճախորդը Բանկին վճարում է վերջինիս կողմից մատուցվող բանկային ծառայությունների դիմաց Սակագներով նախատեսված չափերով միջնորդավճարներ:

1.5. Սակագները Բանկի կողմից կարող են միակողմանիորեն փոփոխվել: Ընդ որում Սակագների ցանկացած փոփոխության մասին, որը կհանգեցնի տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխմանը, Բանկը պարտավոր է տեղեկացնել Հաճախորդին այդ օրվանից առնվազն 15 օր առաջ՝ ըստ հաճախորդի կողմից ընտրված տարբերակի:

Ընդ որում՝ տեղեկատվությունը համարվում է Հաճախորդին տրամադրված այն վերջինիս փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում վերջինիս համար այն հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից, թե Հաճախորդը փաստացի երբ է ստանում այդ տեղեկատվությունը:

Նշված փոփոխությունները ներառվում են նաև Բանկի www.conversebank.am ինտերնետ էջում:

1.6. Հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

2. Հաշվի բացման և վարման կարգը

2.1. Բանկն իրականացնում է Հաշվի համալիր սպասարկումը և Հաճախորդի հանձնարարությամբ Հաշվի հետ կապված այն բոլոր հաշվարկային և դրամարկղային գործառնությունները, որոնք արգելված չեն ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

2.2. Պայմանագրով նախատեսված հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են Հաշվի մնացորդի սահմաններում՝ չօգտագործելով Հաշվին առկա չնվազող մնացորդը և հաշվի առնելով Միջնորդավճարների չափերը:

2.3. Հաճախորդի հաշվի սպասարկման կապակցությամբ առաջացող հարաբերությունները կարգավորվում են Պայմանագրով և/կամ դրան վերաբերող Բանկի ներքին իրավական ակտերով:

2.4. Հաճախորդի կողմից Հաշվի մնացորդի ճշտությունը կարող է վիճարկվել Հաշվից քաղվածքը ստանալու օրվանից 10 օրացույցային օրվա ընթացքում, որի դեպքում Բանկը Հաճախորդի հետ միասին կատարում է փոխադարձ հաշվարկ և Բանկի մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերման դեպքում 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում կատարում ուղղում:

2.5. Հաճախորդի հայտերով արտարժույթի առուվաճառքի գործառնություններն իրականացվում են Բանկի կողմից սահմանված փոխարժեքներով և կարգով:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Բանկը պարտավոր է.

3.1.1 Հաճախորդի հաշվարկա-դրամարկղային փաստաթղթերում հիմնավորված կասկածներ հայտնաբերելու դեպքում անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին,

3.1.2. վերսկսել հաշվով կատարվող գործառնությունները Հաճախորդից Հավաստագիրը և/կամ Պայմանագրի 3.2.1 կետում նշված խախտումները վերացնելուն և նույն կետում նշված փաստաթղթերը ստանալուն հաջորդող բանկային օրվանից,

3.1.3. ապահովել Հաշվով իրականացվող գործառնությունների, Հաշվի մնացորդի, ինչպես նաև Հաշվի սպասարկման կապակցությամբ Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը,

3.1.4. երեսօրյա պարբերականությամբ Հաճախորդին տրամադրել Հաշվի քաղվածք /այսուհետ՝ Քաղվածք/, բացառությամբ այն դեպքերի, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

ըստ հաճախորդի կողմից ընտրված տարբերակի:

Ընդ որում՝ տեղեկատվությունը համարվում է Հաճախորդին տրամադրված այն վերջինիս փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում վերջինիս համար այն հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից, թե Հաճախորդը փաստացի երբ է ստանում այդ տեղեկատվությունը:

Բանկ _____

Հաճախորդ _____



3.2. Բանկն իրավունք ունի.

3.2.1. ի կատարումն ահաբեկչության ֆինանսավորման և փողերի վաճառման դեմ պայքարի վերաբերյալ և ՀՀ այլ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների՝ Հաճախորդից պահանջել ներկայացնելու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները Հաշվով կատարվող գործարքների վերաբերյալ, իսկ վերջիններս չտրամադրվելու դեպքում՝ հրաժարվել Հաշվով գործարքներ կատարելուց:

Նշված տեղեկությունների ճշտումը կատարվում է հավաստագիրը կամ Բանկի կողմից տրամադրված համապատասխան փաստաթուղթը, այսուհետ՝ «Հավաստագիր», Հաճախորդի կողմից պատշաճ ձևով լրացնելու և առձեռն կամ Բանկի հետ համաձայնեցված այլ եղանակով Բանկ ներկայացնելու միջոցով,

3.2.2. դադարեցնել Հաճախորդի հաշվով իրականացվող բանկային գործառնությունները, եթե Հաճախորդը ողջամիտ ժամկետում չի ներկայացնում Պայմանագրի 3.2.1 և 3.2.4 կետում նշված փաստաթղթերը կամ Հաճախորդի բացատրություններն ու ներկայացված փաստաթղթերը Բանկի կողմից գնահատվում են անբավարար.

3.2.3. հաշվանցել Բանկի և Հաճախորդի հանդիպական պահանջները,

3.2.4. Բանկի տեսակետից Հաշվով արտասովոր կամ կասկածելի գործառնություններ կատարվելու դեպքում Հաճախորդից պահանջել գրավոր կամ բանավոր բացատրություն, ինչպես նաև տվյալ գործառնությունը հիմնավորող փաստաթղթեր /պայմանագիր, հավաստագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն/,

3.2.5. Հաշվից /ներառյալ Բանկում ունեցած այլ հաշիվներից, այդ թվում՝ արտարժութային/ զանձել Սակագներով նախատեսված Միջնորդավճարների գումարները, Հաճախորդի հանձնարարականների կատարման հետ կապված Բանկի կրած ծախսերի գումարները /որոնք Հաճախորդը սույնով պարտավորվում է փոխհատուցել Բանկին/, ինչպես նաև Բանկի հանդեպ Հաճախորդի ունեցած այլ պարտավորությունների գծով գումարները:

Ընդ որում, Բանկի դրամային պահանջները և գործարքների համար զանձումները առաջնահերթ զանձվում են գործարքի առարկա կամ ՀՀ դրամով հաշվից/ներից, իսկ վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի արտարժութային հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին Բանկում գործող փոխարժեքներով:

Սույն ենթակետը Պայմանագրի գործողության ողջ ժամկետում հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 922 հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ Հաճախորդի կողմից Բանկին տրված կարգադրություն:

3.2.6. լուծել Պայմանագիրը. եթե

- Հաճախորդի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված կետերից որևէ մեկը,
- առկա են ՀՀ նորմատիվ իրավական ակտերով դրա համար նախատեսված այլ հիմքեր:

3.3. Հաճախորդը պարտավոր է.

3.3.1. Պայմանագրով և/կամ ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով մեկշաբաթյա ժամկետում Բանկի պահանջով վերջինիս տալ բացատրություններ, ներկայացնել պատշաճ փաստաթղթեր և տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ, որոնք առնչվում են Հաշվով կատարվող գործառնությունների հետ,

3.3.2. պահպանել ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հաշվարկային, դրամարկային և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացման կանոնները,

3.3.3. Բանկին ներկայացվող հաշվարկային և դրամարկային փաստաթղթերը լրացնել պատշաճ՝ սահմանված ձևին համապատասխան.

3.3.4. երրորդ անձանց պահանջներով Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու կարգադրություններում նշել բավարար տվյալներ, որոնք հնարավորություն կտան նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

3.3.5. չօգտագործել Հաշվին մուտքագրված չվճարվող մնացորդը:

3.4. Հաճախորդն իրավունք ունի.

3.4.1. Պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած ժամանակ տեղում ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող հաշվարկադրամարկային գործառնությունների և այլ բանկային ծառայությունների իրականացման ներբանկային կարգերին և Սակագներին, այնքանով, որքանով դրանք չեն հանդիսանա Բանկային կամ առևտրային գաղտնիք,

3.4.2. ցանկացած ժամանակ միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ Բանկին վճարելով Սակագներով նախատեսված տուգանքի գումարները:

3.4.3. չեղյալ համարել իր կողմից ներկայացված վճարման հանձնարարականը՝ ժամանակին Բանկ ներկայացնելով պատճառաբանված համապատասխան ծանուցում և փոխհատուցելով այդ կապակցությամբ Բանկի կրած ծախսերն ու վնասներն ամբողջությամբ: Վճարման հանձնարարականի մերժման և/կամ չեղյալացման կարգը, հիմքերը և պայմանները սահմանվում են ՀՀ նորմատիվ իրավական ակտերով.

3.4.4. Բանկի կողմից ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով Հաշվով գործառնությունները դադարեցնելու դեպքում Պայմանագիրը լուծելու և Հաշիվը փակելու վերաբերյալ Հաճախորդի դիմումը Բանկի կողմից ենթակա է մերժման այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացել Հաշվով գործառնությունների դադարեցման համար հիմք ծառայած հանգամանքները:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

4.2. Պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:


Սույնով Բանկը հրաժարվում է կնքել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:

4.3. Պայմանագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել բացառապես Կողմերի ստորագրությամբ գրավոր համապատասխան փաստաթուղթ կազմելու միջոցով:

4.4. Պայմանագիրը կնքված է երկու հավասարազոր օրինակներից՝ հայերեն և _____ լեզուներով: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Մեկնաբանման և տարրևթերցումների դեպքում հիմք ընդունվում է հայերեն տարբերակը:

Բանկ _____

Հաճախորդ _____

 CONVERSE BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	FO 72-01-01
	Ընթացիկ նկատ խնայողական հաշվի /հաշիվների/ բացման և վարման պայմանագիր	Խմբագրություն 2

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Բ Ա Ն Կ

Հ Ա Ճ Ա Խ Ո Ր Դ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 Վազգեն Սարգսյան 26/1

Կ.Տ.

Կ.Տ.